

8175



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

Շրջակա միջավայրի նախարար
Համբարձում Մաթևոսյան

«29» 08 2025թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ N 198 - 25

Նախաձեռնող՝

«ԱՐՄՕՅԼ» ՓԲԸ

ք. Երևան, Դավթաշեն 2-րդ թղմ. 28/4

Գործունեությունը՝

Եղվարդ բնակավայրում քսայուղերի և
բիտումի արտադրություն
Կոտայքի մարզ, Նաիրի համայնք

Առդիր՝ 7 թերթ:

**ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ**

ԲՓ № **198 - 25**
«**29**» **07** 2025թ.

**Քսայուղերի և բիտումի արտադրության շրջակա միջավայրի վրա
ազդեցության գնահատման հաշվետվություն**

Նախաձեռնող՝	«Արմոյլ» ՓԲԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն/նախագիծ
Գործունեության տեսակը՝	«Ա» կատեգորիա
Գտնվելու վայրը	Նաիրի համայնք, Եղվարդ բնակավայր Երևանյան խճուղի 129, 129/1, 129/2, 129/3, 129/4, թիվ 2 արտադրամաս

Ներածական մաս. «Արմոյլ» ՓԲ ընկերությունը նախատեսում է Կոտայքի մարզի Նաիրի համայնքի Եղվարդ բնակավայրում շահագործել քսայուղերի և բիտումի արտադրության կառուցված գործարանը:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի ՀՕ-150-Ն (այսուհետ՝ Օրենք) 12-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետի «գ» ենթակետի՝ ներկայացված գործունեությունը դասվում է «Ա» կատեգորիայի գործունեության տեսակի:

Արտադրության գործընթացը նախատեսվում է իրականացնել արդեն իսկ կառուցապատված արտադրական տարածքում, որտեղ տեղակայված են արտադրությունը կազմակերպելու համար անհրաժեշտ բոլոր սարքավորումները, իսկ տարածքն ապահովված է անհրաժեշտ ենթակառուցվածքներով: Հողամասերի նպատակային նշանակությունը՝ արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության է, գործառնական նշանակությունը՝ արդյունաբերական օբյեկտների, գրանցված իրավունքի տեսակը՝ սեփականություն: Գործարանը գտնվում է 2,8 հա սեփականաշնորհված հողամասում: Գործարանում նախատեսվում է իրականացնել բիտումի արտադրություն, յուղերի խառնում (blending) և փաթեթավորում:

Մոտակա բնակելի տունը գտնվում է գործարանից 140 մ հեռավորության վրա, ճանապարհը՝ 73.86 մ, իսկ 48.7 մ և 58.9 մ հեռավորության վրա գտնվում են այգիներ:

Նկարագրական մաս. Բիտումի արտադրություն

Եղվարդ բնակավայրում նախատեսվում է շահագործել բիտումի օբյեկտում գործարան, որի տարածքում նախատեսվում է նաև յուղերի փաթեթավորման տեղամաս: Արտադրամասն



աշխատելու է տարեկան 300 օր, օրական 8 ժամ: Արտադրամասի նախագծային արտադրողականությունը կազմելու է՝

տարեկան – 90.0 հազ.տ տարբեր նշանակության բարձրորակ բիտումներ՝

ամսական – 7.5 հազ.տ

օրական – 300 տ

Հումքը նախատեսվում է ներմուծել Իրանից:

Տարբեր բիտումների ստացման համար օգտագործվելու VACUUM RESIDUE մակնիշի հումք:

Հումքի բնութագիրը

Հումքի անվանումը	Խտու- թյուն, կգ/մ ³	Կինեմատիկ մածուցիկու- թյունը՝ 100°C տակ, մմ ² /վրկ	Բոցավառման կետ, °C	Ծծմբի պարու- նակություն, %
VACUUM RESIDUE, Իրան	1037	2650	177	0.47

Համաձայն հաշվետվության՝ բիտումի ստացումը նախատեսվում է BLOWING տեխնոլոգիայով, որը հիմնված է ամերիկյան ստանդարտների վրա և ներառում է հումքի տաքացումը մինչև 200 C°՝ ճնշման տակ: Բիտումի ելային հումքը պահեստավորվում է մեկ 500 մ³ գլանաձև տարողության մեջ, որն օժտված է ջեռուցիչ գալարախողովակով:

Բիտումի հումքը տաքացվելու է գալարախողովակ մատուցվող տաքացված յուղի շնորհիվ: Յուղի տաքացման համար տեղադրվելու է կաթսա՝ բոյլերով: Կաթսայում օգտագործվելու է բնական գազ, որի ծախսը նախատեսված է 150 մ³/ժամ:

Կաթսան աշխատելու է օրական միջինը 3 ժամ, ջերմաստիճանը գլանաձև պահեստում կարգավորվելու է ավտոմատ: Այրված գազերը արտանետվելու են մթնոլորտ՝ 9 մ բարձրությամբ և 50 սմ տրամագծով խողովակի միջոցով:

Տաքացված հումքն ուղղվելու է ռեակտոր, որտեղ ճնշման տակ տրվելու է օդ:

Արդյունքում, սառչելուց հետո, ստացվելու է պինդ տարբեր եղանակային պայմանների նկատմամբ դիմացկուն բարձրակ բիտում:

Օքսիդացման գործընթացում առաջացած գերթեթև գոլորշիները, որոնք կազմում են արտադրության ընդհանուր ծավալի 0.01%, անցնելու են կոնդենսացման աշտարակով, որտեղ սառչում ու ջրազրկվում են: Կոնդենսացման աշտարակում գազերի արագության անկման և սառեցման արդյունքում գազերում առկա փոշիները նստելու են աշտարակի հատակին և պարբերաբար հեռացվում ու պահեստավորվում: Այդ նստվածքն իրենից ներկայացնում է Cst 380 մակնիշի մազութ: Ամեն 1500տ բիտումի օկսիդացումից առաջանում է 5տոննա, կամ տարեկան 300 տոննա մազութ:

Ջրազրկված և փոշուց մաքրված գազերը մտնում են ներքին այրման վառարան /աշտարակ/, որտեղ 870 C° ջերմաստիճանում գազերում պարունակվող ագխաջրածիններն այրվում են:

Համաձայն հաշվետվության՝ բիտումի օքսիդացումն իրականացվելու է մինչև 200 C° աստիճանում, որի արդյունքում, ըստ տեխնոլոգիայի ծծմբային երկօքսիդի և առաջանալու (ծծմբի այրումը թթվածնում սկսում է 280 C° ջերմաստիճանի ժամանակ, իսկ քլորայա տարածքում 360 C° ջրմաստիճանի տակ):



Գազերում պարունակվող CO-ն վառարանում այրման արդյունքում առաջացնում է CO₂ :

Ծծմբային անհիդրիդը կարող է առաջանալ այրման աշտարակում, եթե այնտեղ հայտնվեն ծծումբ պարունակող փոշիներ, որի հավանականությունը բավականին ցածր է, հաշվի առնելով, որ ծծմբի պարունակությունը ելային հումքում կազմում է 0.47 %:

Բիտումի գործարանի շահագործումն առանց այրման վառարանի արգելվում է: Ներքին այրման վառարանի բարձրությունը 8մ է, տրամագիծը՝ 2.8 մ: Ծխնելույզի բարձրությունը՝ 30 մ, տրամագիծը սկզբնական մասում՝ 1,4 մ, իսկ վերջնական մասում՝ 1,1 մ:

Տվյալ նախագծային լուծումները թույլ են տալիս.

1. Կանխել ծծմբի կորուստները օքսիդացման գործընթացում և ստանալ բարձրորակ բիտում,
2. Կտրուկ նվազեցնել արտադրամասի ազդեցությունը մթնոլորտային օդի վրա:
3. Գազերի արտանետումները մթնոլորտ հիմնականում տեղի են ունենալու բնական գազի այրումից կաթսայում և ներքին այրման վառարանից (աշտարակը):

Բիտումի արտադրամասում օգտագործվող սարքավորումներ

h/h	Անվանումը	Քանակը	Տարողությունը, մ ³	Ծանոթություն
1	Ճնշման աշտարակ	2	112 մ ³ (100 տ)	
2	Կոնդենսացման տանկ	2	4 մ ³ (5 տ)	
3	Անջատման տանկ	1	8 մ ³ (7.5 տ)	
4	Ներքին այրման աշտարակ	1	հզոր. 3 մլն. Կկալ	
5	Վերնահոս տարողություն	1	10 մ ³ (8տ)	
6	Նախնական տաքացուցիչ	1	հզոր. 2.5 մլն. Կկալ	
7	Յուղի բոյլեր	3	հզոր. 2.3 մլն. Կկալ	
8	Օդի կոմպրեսոր	2	44 մ ³ /րոպե	250 կՎատ
9	Հումքի պահեստարան	2	1000 մ ³	ստորգետնյա
10	Պատրաստի արտադրանքի պահեստարան	2	500 մ ³	ստորգետնյա
11	Սնուցման ռեզերվուար	1	200 մ ³	ստորգետնյա
12	Հումքի տեղափոխման պոմպ	4	1 մ ³ /րոպե	37 կՎտ
13	Պատրաստի բիտումի տեղափոխման պոմպ	2	0.4 մ ³ /րոպե	11 կՎտ
14	Հումքի դատարկման տարողություն	1	9 մ ³	
15	Հակահրդեհային պահեստարան	2	500 մ ³	ստորգետնյա

Գործարանի էլեկտրամատակարարումն իրականացվելու է Եղվարդի քաղաքային էլեկտրացանցից՝ սեփական ենթակայանի միջոցով:

Գործարանի ջրամատակարարումն իրականացվելու է քաղաքային խմելու-տնտեսական համակարգից: Խմելու որակի ջուրն օգտագործվելու է միայն աշխատողների տնտեսական ցանցաղային կարիքների համար, արտադրական նպատակների համար ջուր չի պահանջվում: Առաջացած կենցաղային կեղտաջրերի համար նախատեսված է 3 սեպտիկ հոր՝ ստորգետնյա լցարաններով:

Քսայուղերի արտադրամասը տեղադրվելու է 446.6 մ² մակերեսով փակ մասնաշենքում, որն օժտված է օդափոխության համակարգով:

Բիտումի արտադրությունը բացօթյա է:



Աշխատողների համար նախատեսվում են ցնցուղարաններ, ճաշարան և դահլիճ:

Նախատեսված է հրաշիջման կայան՝ սեփական հրաշիջման մեքենայով և 2 հատ 500մ³ ստորգետնյա ռեզերվուար՝ մշտական ջրի պաշարով:

Հեղեղաջրերի հավաքման, մաքրման և հետագա օգտագործման նպատակով նախատեսված է հեղեղային կոյուղի՝ մաքրման կայանով:

Գործարանի արտհրապարակը նախատեսվում է բարեկարգել և մոտ 1000 մ² կանաչապատել՝ գազոններով և պտղատու ծառերով:

Յուղերի արտադրամաս

Յուղի արտադրությունը հիմնված է համաշխարհային բարձր ստանդարտների վրա և աշխատելու է Blending տեխնոլոգիայով, որի ընթացքում տարբեր հավելանյութերի և հիմնական հումքի խառնման ընթացքում ստացվում են տարբեր տեսակի յուղեր՝ շարժիչային, հիդրավլիկ, փոխանցման տուփի, արդյունաբերական, և այլն:

Պատրաստի արտադրանքը խողովակների միջոցով տեղափոխվում է փաթեթավորման հոսքագիծ, որի օգնությամբ լիցքավորվում են տարբեր տարողության տարաներ՝ 1, 4, 5, 20 և 220 լ:

Որպես հավելանյութ, ըստ յուղի նշականության, ավելացնում են հակաօքսիդանտները, մածուցիկության կարգավորիչը, դեպրեսանտները, դիսպերգենտները և դետերգենտները, փրփրամարիչները, էմուլսիֆիկատորները և դեէմուլսիֆիկատորները, ինչպես նաև հակակոռոզիոն և մաշակայունությունը բարձրացնող հավելանյութերը:

Հումքը նախատեսվում է ներմուծել Իրանից: Տարբեր մակնիշի յուղերի ստացման համար նախատեսվում ավտոմատացված հոսքագիծ:

Հումքի բնութագիրը

Բազային յուղի անվանումը	Խտություն, գ/մ ³	Կինեմատիկ մածուցիկություն, մմ ² /վրկ		Բոցավառման կետ, °C	Ծծմբի պարունակություն, %
		40°C տակ	100°C տակ		
Base oil SN-100	0.845-0.870	18.2-22.4	3.8-4.3	≥ 190	0.35
Base oil SN-150	0.860-0.875	28.8-33.5	5.0-5.5	≥ 210	0.45
Base oil SN-350		60-70		≥ 230	≤ 0.4
Base oil SN-500	0.883		10.1-11.0	≥ 240	≤ 0.95
Base oil SN-650	0.885-0.900	≥ 135	13.0-16.2	≥ 220	0.65

Պատրաստի արտադրանքի բնութագիրը

Համաձայն հաշվետվության՝ յուղերի արտադրամասի արտադրողականությունը կազմելու է տարեկան 24.0 հազ.տ, ամսական՝ 2000 տոննա բարձրորակ յուղ, հետևյալ ապրանքատեսակներից.

- բենզինային շարժիչի յուղեր՝ SJ, SL, SM, SN ստանդարտով
- դիզելային շարժիչի յուղեր՝ CD, CE ստանդարտով



- հիդրավլիկ յուղեր
- արգելակման հեղուկներ
- ավտոմատ և ոչ ավտոմատ փոխանցման տուփի յուղեր
- արդյունաբերական յուղեր

Պարճառաքանական մաս. Փորձաքննական գործընթացին մասնակցել են՝ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների, առողջապահության, ներքին գործերի նախարարությունները, քաղաքաշինության և կադաստրի կոմիտեն, քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմինը, Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմինը, Գիտությունների ազգային ակադեմիան, Երևանի պետական համալսարանի քիմիայի գիտահետազոտական կենտրոնը, Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանը, Կոտայքի մարզպետի աշխատակազմը, Նաիրիի համայնքապետարանը, շրջակա միջավայրի նախարարության համապատասխան բաժինները: Փորձաքննական գործընթացին ներգրավվել է նաև ոլորտի հրավիրյալ փորձագետ:

Նախատեսվող գործունեության ՇՄԱԳ հաշվետվության փորձաքննությունն իրականացվել է Օրենքի պահանջներին համապատասխան: «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՕ-150-Ն օրենքի և ՀՀ կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 28-ի N 2343-Ն որոշման հավելվածի՝ 2025թ. մայիսի 29-ին՝ ժամը 11:00-ին, Կոտայքի մարզի Նաիրիի համայնքի «Եղվարդի արվեստի դպրոց» ՀՈԱԿ-ի դահլիճում կայացել է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ երկրորդ հանրային լսումը, որից հետո առաջարկներ և դիտողություններ չեն ներկայացվել լիազոր մարմին:

1. Խնդրահարույց է մնում այն հանգամանքը, որ գործունեության համար պահպանված չեն սանիտարապաշտպանական գոտու սահմանված նորմերը՝ մոտակա բնակելի տարածքի, որը գտնվում է 140 մ հեռավորության վրա և 73.86 մ հարևանությամբ գտնվող ճանապարհի: Մինչդեռ քաղաքաշինական նորմերի համաձայն՝ քիմիական օբյեկտների և արտադրությունների բնագավառում՝ բիտումի արտադրության համար նախատեսված է 1000 մ սանիտարապաշտպան գոտի (Քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2024 թվականի փետրվարի 1-ի «ՀՀՇՆ 31-04.01-2024 «Արտադրական և հասարակական նշանակության շենքերի ու շինությունների սանիտարապաշտպանական գոտիներ և սանիտարական դասակարգում» N06-Ն հրամանի հավելվածի (այսուհետ՝ Հավելված) 12-րդ գլխի, 117 կետի, 1-ին մասի, «լբ.» ենթակետի):

Փորձաքննական գործընթացում դիտարկվել է նաև Ընկերության կողմից ներկայացված ԿԴ1/2678/02/19 քաղաքացիական գործով առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 21.02.2025 թ. կայացված վճիռը, որով սեփականության իրավունքի խախտումը վերացնելու պահանջի մասին Ընկերության հայցը բավարարվել է, ելնելով տվյալ հանգամանքից սանիտարապաշտպանիչ գոտու սահմաններում գտնվող



այգեգործական տարածքները գործունեության վնասակար ազդեցության գնահատման չեն դիտարկվել:

2. Նախագծում և ՇՄԱԳ-ում տրված չէ օքսիդացման պրոցեսների ժամանակ առաջացող «գոլորշիների» գազային կազմը, ինչպես են դրանք հավաքվելու, ոչնչացվելու, ինչ է արվելու առաջացած ջրային կոնդենսատի հետ: Ինչ քանակի, ծավալի ու բաղադրության ջրային կոնդենսատ է առաջանալու, որտեղ է այն պահվելու ու հետագայում որտեղ է թափվելու կամ չեզոքացվելու: Բիտումի արտադրությունը կապված է ջերմոցային գազերի զգալի արտանետումների հետ: Էներգատար արդյունահանման և վերամշակման մեթոդները հանգեցնում են ածխաթթու գազի (CO_2), մեթանի (CH_4), այլ ջերմոցային գազերի, ցնդող օրգանական միացությունների արտանետում դեպի մթնոլորտ: Իսկ հաշվետվությունում նկարագրված չէ, թե ինչպես է նվազեցվելու արտանետումների ազդեցությունը մթնոլորտային օդի որակի վրա:

3. Հաշվետվությամբ չի անդրադարձվում նաև բիտումի արտադրության ընթացքում առաջացող ծծմբաջրածին՝ H_2S -ը հղում [“МЕТОДИЧЕСКИЙ ПОДХОД К СНИЖЕНИЮ ВЫБРОСОВ В АТМОСФЕРУ” Е.И. БАРАНОВА, Н.В. СОЛОННИКОВА, 2015г.], որը սուր հոտով, թունավոր գազ է և նշված չէ դրա հետագա չեզոքացման ոչ մի միջացառում: Չի նշվում նաև օքսիդացման աշտարակից դուրս եկող գազերում ազոտի օքսիդների՝ NO , NO_2 մասին:

Հարկ է նշել, որ կան բազմաթիվ գրական տվյալներ, որտեղ նշվում են բիտումի արտադրության ժամանակ արտանետվող ջերմոցային գազերի՝ CO_2 , CH_4 , և միացությունների մասին: Արտանետումներում հարկավոր էր նաև դիտարկել մեթանը, ածխածնի մոնօքսիդը (CO) և ցնդող արոմատիկ ածխաջրածինները, որոնք նավթամթերքներին ուղեկցող և պարտադիր չափվող միացություններից են համարվում:

4. Համաձայն հաշվետվության՝ հեղեղաջրերը կուտակվում են և մեխանիկական մաքրումից հետո օգտագործվելու են ոռոգման կամ այլ նպատակներով, սակայն մեխանիկական մաքրումը չի նախատեսում վտանգավոր քիմիական նյութերի, այս պարագայում նավթամթերքների մնացորդների հեռացում հեղեղաջրերից: Նման հոսքաջրերի՝ ոռոգման կամ հակահրդեհային նպատակով կիրառումը կբերի տարածքի լայնածավալ երկրորդային աղտոտման:

5. Հաշվետվության էջ 36-ում նշվում է, որ բիտումի որակը կախված է նրանում պարունակվող ծծմբի քանակից, սակայն չի պարզաբանվել՝ արդյոք տեխնոլոգիական գործընթացում նախատեսվում է ծծմբի հավելում՝ անհրաժեշտության դեպքում, թե ոչ:

6. Հաշվետվությամբ՝ բոլորներում յուղի տաքացման կաթսան աշխատելու է օրական 3 ժամ, սակայն հետագայում ֆիզիկամեխանիկական հատկությունները կորցրած յուղի փոխարինումը նորով, վտանգավոր թափոնի վերացված յուղի պահման և տեղափոխման գործընթացները ներկայացված չեն:

Այսպիսով, նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում սպասվող արտանետումներն իրենց անդառնալի բացասական ազդեցությունն են ունենալու շրջակա միջավայրի վրա՝ մթնոլորտային օդի և հարակից բնակավայրի:



Հաշվետվությամբ ներկայացված գործունեության համար պահպանված չեն սահմանված սանիտարապաշտպանիչ գոտու չափերը:

Փորձաքննության գործընթացում դիտարկվել և եզրակացության կազմման համար հիմք են հանդիսացել ոլորտի նեղ մասնագետների հետ կայացած աշխատանքային քննարկումները և առաջարկները:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«Արմոյլ» ՓԲԸ-ի կողմից փորձաքննության ներկայացված Կոտայքի մարզի Նաիրի համայնքի Եղվարդ բնակավայրում նախատեսվող քայլուղերի և բիտումի արտադրության շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է պետական փորձաքննական բացասական եզրակացություն:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար՝



Սևակ Մարկոսյան
21.07.2025թ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝

[Signature]

Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ՝

[Signature]

Շուշանիկ Կարապետյան